

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՅՈՒԼԻՍ 19

ԹԻԻ 3831

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 19 ՅՈՒԼԻՍ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ՄԲՅԱՆԱԿԱԲԱՇԵՆՈՒՄՆ

ՔԱՂԱՔԱՂԱՔԱՆԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

Ի 13 ՅՈՒԼԻՍԻ

Քանի՜ քաղցր եւ սիրուն է մանկութիւն իւր կենաց առաջին նշոյլներուն մէջ, հրեշտակային կերպարանօքն եւ ժմտիւք, որ այնչափ բանաստեղծից եւ աշխարհակալաց իսկ աւիւնն ու միտքը յափշտակեր է ու կը յափշտակէ. բայց սրջափ աւելի քաղցր եւ սիրուն է յառաջացեալ մանկութիւնն, որ է պատանեկութիւն եւ արքուն հասակ, իւր առողջանձն անմամբն ու սուր մտօքն եւ ըմբռնողութեամբ, վառվառն ու ժիր գործունէութեամբն, երբ մանաւանդ այդ ամենայն արդասիրէ են սրտի ազնուութեան եւ շնորհալից զգացմանց: Արդարեւ իսկ երջանիկ են գերդաստանք, քաղաքք եւ թագաւորութիւնք երբ բազմութիւն այսպիսի ընտիր պատանեաց կ'ամբողջեն իրենց մէջ, որք ստոյգ ճոխութիւնք են եւ զօրութիւն ապագայի: Ինչպէս աղէկ ըմբռնած էին զայս նաեւ Յոյնք ի հնումն իրենց ոսկեդարուց մէջ, եւ հաւասար իրենց եւ ըստ իմիւր աւելի իսկ թերեւս Հռովմայեցիք, յորոց հիւանայի է Գրաքիոսեանց մօտ Կուսնէլիայի սիրազեղ վսեմախօսութիւնն, իւր որդիքը իրրեւ իւր գոհարեղէնքն ու գան-

ձերը մատնանիլ ընելով. եւ Մ. Տ. Կիլիբրոյի ճոխանալն դաստիարակութեան եւ գիտութեան արուեստի վրայ, զԱրքիաքերթող Հռովմայ քաղաքացի ընելու համար ի պաշտպանութիւն եւ ի գովեստ խօսած ճառին մէջ, ըսելով՝ «Զրազուս վկայեմ ես առանց գիտութեան արս վսեմամիտս եւ առաքինիս լինիլ, եւ իրրեւ յածեղէն իմն բուսոյ բնութեան՝ համեստս եւ զգօնս . . . Բայց սակայն եւ զայս վիճեմ, զի «բարեք յենար է յաղնիքն բնութեան զապագայն հրեշտակէք էնլ եւ յերկնաշէնքն գիտութեան, առաջադէպն այն եւ անհաշիւար չէրեմ զի՛նչ սաղար է երեւելէ» Եւ եթէ հինք իրենց կիսադօտ լուսովն դաստիարակութիւնն ասանկ մեծ ու բարձր ըմբռնեցին, տարակոյս չը կայ թէ քրիստոնէութիւնն, եւ ապաւորի առաւել յարգ ու օծումն տուով յայնմ, միշտ վեհ ու վսեմ սլարտք համարած է իրեն բողոքատարած ընդգրկել մարդկութեան առաջին հասակները, յորոց ի խնամս եւ ի մշակութիւն անձնանուէր նորանոր նահատակներ ալ յարուցած է անպակաս, դարուց պահանջմանց եւ մարդկութեան պիտոյից յարմար նորակերպ զաստակերտներով ու կարգադրութիւններով, յորոց կ'ընծայուին անդադար օգտաւէտ անձինք եւ զիւցազունք առաքինութեան եւ հանճարոյ, անձանօթք առ նախնեօք . . .

Այսպիսի մտածութեան մէջ ընկղմած էինք երբ անցեալ կ'ըրակի օր ժամը 5ին դէպ ի Գատքէոյ ուղեւորող չողեհնաւուն մէջ կը գտնուէինք, զոր ախորժելի էր տեսնել լի համազգեսք, որք մեզ նմանօրինակ մտածութեամբք զուարթացեալ կ'երեւէին, կ'իրթ եւ ուսեալ պատանիներ տեսնելով իրենց չորս կողմը, յորոց չատն եւ մեզ իսկ կարի

ծանօթ էին . եւ ահա յանկարծ ի նաւակամօրջն հասած գտանք զմեզ , եւ անտի սրարշաւ կռուաց ընթացիւր Վենետիկոյ մեծարգոյ Մխիթարեանց վարժարանին առջեւ , որ նոյն օրը կրկին չքեղութեամբ կը փայլէր :

Գեղեցիկ է արդարեւ այդ մեծակառոյց շէնքն , Մոտայի փողոցիկ սարահարթին վրայ ցցուած , հովասուն եւ տեսարանայից , իւրեւ դիտարան մը անհուն հրաշալեաց բընութեան , որով շատ յարմար իմաստութեան վեհաժայր ըլլալու , հեռի յաճութեւ յաղմկաց : Ամենայն ինչ ոգեւորեալ եւ զուարթ էր անդ . դրօշը եւ սարդենիք՝ իւրեւ ակոյտեանը գիտութեան եւ աշխատասիրութեան , կը դարդարէին ամենուրեք լուսանցոյցն ու որմունքը . գաւթին մէջ աջ կողմանէ եկաւորաց աչքը կը գրաւէին ուրուագրական և ծաղկազիր աշխատութիւնը աշակերտաց . հանդիսատեղւոյն դրան բարաւորին վրայ ոսկեփայլ շրջանակի մէջ կը շողար Փոփէշ-հըճ զօր եւ սրտարուղիս արձանագիրն , եւ ի ներքոյ հանդիսավայրին ճակատը կը փայլէր Վեհ . Սուլթան Ապտիւլ Համիտ բարեգութ կայսեր կերպարանքն , մատիտեայ գովելի աշխատութիւն աշակերտաց միոյն . եւ այլ ամենայն ինչ կարգադրեալ էր եւ պատրաստեալ ըստ պատշաճի եւ ըստ աստիճանի բարձրագոյն Էֆէնտիներու եւ Պարոնայց , եւ ազնուափայլ Տիկնայց եւ Օրիորդաց , որք օրուան տօթակէզ ջերմութեամբն հանդերձ խուռն եւ հոծ լեցուած էին այդքէն :

Հանդէսն՝ որում ըստ եւրոպական արդի սովորութեան կերպ մ'ուսումնական և արուեստական ակադեմիայի ձեւ տրուած էր , սկսաւ ժամը 7ը քիչ մ'անցած , ի սկզբան ընդ նախագահութեամբ Պարոն Սիմոնտէգդիի , Իտալիոյ հանրական հիւպատին , Գերբը . Ազարեան Սրբազանին առ հարկի ուշանալուն պատճառաւ , անակնկալ խանգարմամբ իւր շոգենաւուն , որ ոչ յոյժ 'ի վերջոյ հասաւ առանձինն ետաթի նաւակաւ ի Բրինըրբոյէ : Ներկայ էին հանդիսին նաև այլ և այլ նշանաւոր օտարազգիք , եւ իւր ներկայացուցիչը Օսմ . Պետութեան Սէլիմ և Ապտիւլլաթիֆ Էֆէնտիք (*), ինչպէս

նաեւ շատ ազգային եւ օտարազգի վարդապետք , եւ զաստիարակը զանազան վարժարանաց քաղաքիս :

Զութակահար փայտկահնչիւն երաժշտութեանէ՝ մ'ետքը յստակ արտաբերութեամբ ու զգացմամբ բերանացի հայերէն իմաստայից տալ մ'արտասանեց , օրուան հանդէսն իրեն նիւթ առնելով , Պ . Պետր . Աթա . նասեան , որ յընցուց մեզ քանի մը տարի առաջ ի Պոյաճըքէոյ Պ . Լեւոն Տէմիրճիպաշեանի , ի նորատի պատանեկութեան հասակին , Պէշիքթաշեանի մէկ սրտաուռ տալը եռանդուն ռոմով ու դերասանօրէն արտասանելը , որոյ գովեստն ընական կերպով յաճախ մեր բերանը ու գրչին տակ կուգայ : Արժանի ծախահարութեամբ կընքուող տաղին յաջորդեցին հետզհետէ զանազան հատուածք հայերէն եւ իտալերէն երգոց եւ երաժշտութեանց , վերածեալը եւ համառօտեալը ի Տանիճէդդիէ , Վէրտիէ եւ Պէլլիիէ եւ , եւ փոքրիք ճառք եւ ընթերցմունք շնորհակալեաց տաճկերէն , իտալերէն , գաղղիերէն եւ անգղիերէն լեզուօք , որոց ամենն ալ մեր ազգային լեզուն հետ կ'աւանդուին խնամօք ի վարժարանին : Տաճկերէն լեզուաւ եղած բարեմաղթութիւնը առ Վեհ . Օսմ . կայսրն՝ բաղլաճայն ֆէններով թնդացուցին հանդիսավայրին որմունքը :

Աշակերտաց մէջ քան զամենն աւելի բաջադոյն հանդիսացաւ եւ զանազան մրցանակաց արժանաւոր Պ . Անդր . Ալթունեան . յորմէ յետոյ ըստ արժանեոյն առաւելագոյն մրցանակօք վարձատրեցան Պ . Աստուածատուր Փափազեան , Պ . Պետր . Ճէօհէրեան , Պ . Յովհաննէս Մինասեան , եւ այլք ըստ կարգի :

Յաւարտ մրցանակաշաղխութեանց Սըրբազան Նախագահն սկսելով ընթեռնուլ իւր պատրաստած ճառախօսութիւնը , նախ գովեց ճոխաբար վարժարանի տեսչին , որ է Գեր . Հ . Արք . վրդպ . Ջարեան , բազմամեայ արդիւնքը յազգային դաստիարակութեան մասին , երբեմն շատ տարիներով ի Վենետիկ ի Ռափայէլեան վարժարանի , եւ

տէթլու Սելիմ Էֆէնտի :

Մէքեաթիպի Ռեշտիէ միւտիքի իզգէթլու Ապտիւլլաթիֆ Էֆէնտի :

(*) Մէճլիսի Գեպիքի Մուարիֆ ազասըտան սաա-

հիմա ի Քաղկեդոն հինգ տարիէ ի վեր, եւ ուրախակից ըլլալով իրեն ունեցած յաջողութեան՝ սրտալիր բանիւք քաջալերեց ի նոյն. եւ քանի մը յատուկ խօսքէ ետքը առ ընդհանուր Ախտ Մխիթարեանց, խօսքը դարձնելով առ աշակերտս յայտնեց իւր ըզգացած զոհունակութիւնը իրենց տարեկան ջանից նկատմամբ, եւ հայրաբուղիս բանիւք եւ օրհնութեամբ խրատուեց զիրենք ի մաստութեան գեղեցիկ աստղարիզին մէջ, առանձինն մրցանակօք վարձատրելով իւր կողմանէ աշակերտաց մէջէն երկու քաջագոյնները:

Հանդէսն կը վերջանար ոգելից եւ քաջադէպ մէկ տաղիւ Ղազղանտիւեան Հ. Ա. բիստ. վարդապետի, որ շնորհակալութիւնք յայտնեց առ Սրբազան Նախագահն ի կողմանէ բովանդակ վարժարանի տեսչութեան. եւ յետոյ հանդիսականք սկսան դիտել ըստ բաւականի զարմացմամբ աշակերտաց Ռ. բուռադրութեան եւ Գեղեցկադրութեան աշխատութիւնները: Ի մասին Ռ. բուռադրութեան քաջ կը փայլէին Մոզեան, Ալթունեան, Կիւմիւշեան պարօնայք. իսկ ի հայ եւ յեւրոպական գեղագրութեան Պ. Պետրոս Ճէօհէրեան, եւ ի տաճկերէնի Պ. Յովհաննէս Մինասեան:

Ի վերջոյ վարժարանին վերին դահլիճին ու սենեակներուն մէջ հիւրընկալեցան հետզհետէ եւ պատուեցան զրեթէ բովանդակ հանդիսականաց բազմութիւնն, որք ուր ուրեմն կը մեկնէին քաղցր տպաւորութեամբ լցեալք եւ գոհ ազգերնուս այսպիսի վարժարան մ'ալ ունենալուն համար, եւ մաղթելով անոր առաւելագոյն փայլ եւ պայծառութիւն:

Վ. Վ.



ԱՆՀԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

Մ Ա Ս Ե Բ.

ՍՈՌԱՑՈՒՄ

(Շար. նախորդ թուէն)

Նորեկ կինը սոսկմամբ զատուել ուղեց այս մեղապարտ ընկերութենէն, բայց ամէնուն ծաղրն եւ յարձակումն իր վրայ հրաւիրեց. ամէնքը նախ եւ առաջ տեղեկանալ ուղեցին անոր ոճրին ի'նչ ըլլալը:

— Թունաւորում մը, այդ բան մ'ըսել չ'է, կ'ըսէր անդիէն հոշակաւոր ստահակ մը, ցկեանս չզլթայակապ աշխատութեամբ մը կ'ազատիս:

— 174^{րդ} յօդուածին վերջին պարբերութիւնը գիտե՞ս, զոչեց անդիէն ծերունի խորհրդատուն, կարծես քու վրայիդ ձեռուած է:

— Մեղը այդչափ գեղեցկութեանը, աւելցուց պատանի մարգասփայնը, — մինչդեռ կինն ահաբեկ ու շուարած յիմարի մը պէս իր շուրջը կը նայէր շարունակ, առանց բառ մը հասկնալու եղած խօսակցութենէն:

Նոյն միջոցին խմացուեցաւ այն անհաւատալի սրագութեամբ որ բանտերուն միայն յատուկ է եւ որով ամէն հաղորդակցութեան միջոցէ զուրկ ամբօխի մը մէջ արտաքին բոլոր լուրերն անմիջապէս կը տարածուին, թէ նորեկ ամբաստանեալը Տիգրանի պաշտպանութեան յանձնուած էր դատարանին կողմէ:

Տիգրանի պաշտպանեալ լինիլը կիսով մը փրկուիլ եւ բանտարկելոց երաշխաւորութեան ներքեւ գտնուիլ կը նշանակէր:

Այն վայրկեանէն ամէնքը բարեկամ դարձան նորատի կնոջ ու զինքն յուսադրեցին:

Ամէնքը կը յիշէին այն տարօրինակ թունաւորման դէպքն որով նոր ամուսնացած յոյն վաճառական մը զոհ եղաւ Արնաւուտ գիւղի մէջ: Կասկածները կը ծանրանային

պահանջած պատիժն . եւ այս անհամբերութիւն երկար չի տեսցեց . Խոսքով իր խօսքը շուտով ամփոփեց . մէկ բառով մահուան պատիժ կը պահանջէր մեղապարտ կնոջ դէմ : Ամբաստանելոյն ո՛չ գեղն , ո՛չ երիտասարդութիւնը չ'էին ազդեր այս մարմարէ սրտին :

Արհաւիրից լռութեամբ մը ընդունուեցաւ այս անլուր խտուրթիւն :

Խօսքը պաշտպանութեանն էր :

Իրիկուան ժամը 11 ն էր , սրահը մթնցեր ու գերեզմանի լուսթիւն ու ամփոփում կը տիրէր չորս կողմը :

Տիգրան իր շուրջը նայեցաւ անգամ մը . թշնամի բաղնիսթիւն մ'էր որ գինքը կը չըրջապտէր . ամբաստանելոյն յանցաւորութեան կանխապէս համոզեալ ատեան մ'էր որ իրեն պիտի ունկնդրէր : Զլլա՞յ թէ անկարող լինէր փրկելու այս թշուառուհին , այս վախն անոր միտքը խանգարեց : Մահու ու կենաց վայրկեանն էր . ոտք ելաւ դողդոջուն ու ամբաստանեալէն աւելի տըժգունած :

Ամէն ոք իր շնչառութիւնը պահ մը կըտրեց աւելի աղէկ լսելու համար . ճանճի բզկիւնը պիտի լսուէր հինգ հարիւր հոգիէ աւելի խռնուած սրահի մը մէջ , երբ ծանր ու հաստատ ձայնով փաստաբանն իր պաշտպանութեան ճառն սկսաւ :

Անոնք որ լսեցին , յաւիտեան չը պիտի մոռնան այդ ձայնն . ի՞նչ ըսաւ , ո՞ւրից սկսաւ եւ ի՞նչպէս վերջացուց , ի՞նչ կերպով յաջողեցաւ պատուել , թօթափել այն ծանր կասկածներու մթնոլորտն որուն ներքեւ ամբաստանեալը կ'ընկճուէր , ի՞նչ ձեւով վանեց այն ատելութեան ամպն որ բոլոր ունկնդիրները կը գրաւէր . ոչ ոք պիտի կարենար ճշդիւ գրուցել :

Նախ իրողութիւններն ու յետոյ օրինական ապացոյցները ընկելով , աննման յաջողութեամբ եւ ջախջախիչ կերպով հերքեց այս փաստերն , որոնք ճարտար կապակցութեամբ մը՝ Ընդհ . Գատախաղին ատենաբանութեան մէջ՝ ռճարագործութիւնն ապացուցանելու կը յանգէին :

Բառերը , դաշոյնի հարուածի պէս սուր ու կտրուկ , մի առ մի կը զարնէին այն կասկածներուն որոց կշիռէն կախումն ունէր դատին ելըն :

Ու երբ իր հետախոյզ ակնարկը կրցաւ համոզուիլ որոշել պահ մ'առաջ խոժոռած գէմքերուն վրայ , երբ ամէն ստուեր փառաած տեսաւ դատաւորներուն ճակատէն , այն ատեն յիշելով այն անհանդուրժելի տնտապանքն ու մահացումն որոնց փափուկ ու սրտաբեկ արարած մը յուսահատ քաջութեամբ մը դիմացեր էր , արթնցնելով բանտի ու կապանաց այն անջրնջելի օրերու յիշատակը , փաստաբանին հպարտ շեշտը պաշտպանութենէ ամբաստանութեան դարձաւ : Արդէն սրտայոյզ ոճն այդ քան խորին ու ուժգին չ'էր դղրդած մարդկային սրտերն : Ամէնքը , բիշ մը առաջ ամբաստանելոյն յանցաւորութեան համոզուած , հիմա պարտաստ էին անոր անմեղութիւնը վկայելու :

Այն ժամ միայն տեսց այս զարմանալի պաշտպանութիւնն եւ կէս ժամ , դատաւոր ու ունկնդիր , փաստաշանին ձայնին անբացատրելի հմայութեան տակ մնացին :

Դատաւարութիւնը վերջացաւ , երկրայելի չ'էր տրուելիք վճիռն , եւ բառորդ մը վերջն ամէնքն ակնհերեւ ուրախութեամբ ստացան անմեղութեան վճիռ մը որ միաձայնութեամբ տրուել էր՝ եւ որ ամբաստանելոյն արձակումը կը հրամայէր , մինչդեռ տարաբաղդ կիներ վախէն ու յուզումէն դողդոջուն սրահին մէջ կը նուաղէր :

Տիգրան չ'սպասեց շնորհակալութեան ցոյցերու . ամէնէն մտքուր ու ամէնէն բարձր համբաւն ունեցաւ այս անլուր յաջողութեամբն . ուրիշ բան մը չ'էր պահանջեր . ինչպէս չորս տարի առաջ , հիմա ալ նոյնչափ հաստատ էր այս գեղանի կինը չի տեսնելու որոշման վրայ . իր մոռացման վերջժը լուծեր էր . ուստի մեկնեցաւ առանց ետին դառնալու : Եւ ահա այս կերպով վերջացեր էր այն եղբրական արկածն որ ողջոյն Պոլիսն յուզած էր եւ որ Գէորգ Էֆէնաիի սրահներուն մէջ , ինչպէս այլուր , տիրող խօսակցութեան նիւթն էր :

Սրահներն հետզհետէ կ'ողեւորէին , երեկոյթն իր ամէնէն մեծ փայլն ու զուարթութիւնն ստացեր էր . պարերն իրարու կը յաջորդէին , ու չի պարողները քարափին վրայ կամ ծովահայեաց սրահներուն մէջ կը շրջէին :

Տիգրան չուտով խոյս տուեր էր զինքն հալածող հետաքրքիրներէն . ամէնքն անոր բերնէն լսել կ'ուզէին այս սրտայոյզ տուածին մանրամասնութիւնները . Տիգրան սիրտ չ'ունէր անոնց հազարումէկ հարցմանց պատասխանելու . առանձին ու կիսատուեր սենեկի մը բաց պատուհանին մօտ երեքուն թիկնաթոռի մը մէջ տարածուեր էր ու ծովը կը դիտէր :

Յիրաւի զմայիչ տեսարան մ'էր որ իր տրտում ակնարկին առջեւ կը պարզուէր :

Կէս գիշերը ժամ մը կ'անցնէր , ու լուսինն իր լրման մէջ պայծառ ու կապոյտ երկնից կամարին վրայ կը շողար . ծովն հանդարտ էր , ուր կ'ա՛դրադառնար երկինքն իր կապոյտովն ու անհամար աստղերով . ամառուան այն անբացատրելի գիշերներէն մին էր որով Վոսփօրն այնչափ դիւթիչ է : Բնութեան այս անդորութիւնն ու պարզութիւնը զինքն յափշտակեց , մոռցաւ երեկոյթը , սրահը , բազմութիւնն ու երաժշտութեան վրդովեալ ձայներն . առանձնութիւն ու լուսութիւն կը տիրէր իր շուրջն . ամէնքն աշխարհիս մէջ կ'գրօնուին ու զրուարթ էին . ինքը միայն մենիկ ու ապերջանիկ մնացեր էր :

Իր մանկութիւնն ու պատանեկութիւնն որբութեան , աղքատութեան ու աշխատութեան մէջ անցուցեր էր . հազիւ երիտասարդ , ամէնէն կանուխ թեւակոխած հրապարակային կեանքին մէջ ուր վաղաժամ այլ արդարացի համբաւ մ'իրեն կը հետեւէր , ափսոս , մէկը չ'էր ունեցած հազրդեւութեան ու բաժնեւոր անոր հետ իր մշտայոյզ հոգւոյն վրդովումըն : Իր հայրն ու մայրը գերեզմանէն միայն կրնային նայիլ իրենց միակ որդւոյն փառալից կենացն և չի կար իր քով սիրեցեալ մէկն որու բանար իր հազար զգացումներով , յոյսերով , խանդաղատանօք լեցուած սիրտը : Սեդրաքի մահունընէ ի վեր մենակեաց , ծեր , դաժան ու վայրենի մէկը դարձեր էր . Սեդրաք . . . չատոնց սեւ հողը կը ծածկէր զայն . . . ու ինքը մինակ , բոլորովին մինակ մնացեր էր աշխարհիս վրայ . . . :

Այս տխուր մտածումներուն մէջ էր երբ մերձակայ սրահէն դաշնակի մը վրայ քաղցր ու տրտում եղանակ մը կը բարձրանար , իբրեւ թէ . ծովուն ալեաց վրայէն ու գիշեր-

ուան խորին լուսթեան մէջ , յամր ու դանդաղ շեշտերով :

Զարմանք , այս եղանակն անձանօթ չ'էր Տիգրանին . անոր սրտմահնչուն նուագէն ճանչցաւ թէ Սեդրաքի սիրած մէկ կտորն էր : Յաջեալ և անձկանօք ոտք ելաւ , հասկընալու համար թէ ո՞վ էր այն անձն՝ որ պարահանդէսին թնդ իւնէն ու աղմուկէն խուսափած , առանձին սրահի մը մէջ կը դաշնակէր այս տխուր եղանակն՝ որ այնքան մօտէն իր դաղափարաց տրտմութեանը կը պատշաճէր :

Երիտասարդ ու վայելչագեղ կին մ'էր որ , առանց նոթայի , միայն իր յիշողութեան զօրութեամբ , այս դժուարին կտորը դաշնակին վրայ այնչափ կատարելութեամբ ու հոգւով կը զարնէր : Ամուսինը , Տիգրանի ծանօթ պաշտօնատար մը , անոր մօտն էր , որ զինքը տեսնելով ըսաւ . « Վօտեցէք , սիրելի փաստարանս , կ'երեւի թէ դուք ալ ինձ պէս ժխորէ չ'էք Խորթիւր , բայց իրաւունք չ'ունիք դուք , որովհետեւ դեռ երիտասարդ էք և զբօսնելու պէտք ունիք : Տիկին , աւելցուց , իր մանկամարդ կնոջ դաշնալով , ահաւասիկ ձեզ կը ներկայացնեմ իմ ամէնէն աւելի յարգած բարեկամներէս մին , այն երիտասարդ փաստարանն՝ որու անունը ամէնուն բերանն է . Տիկին Արամ էֆէնտի , աւելցուց երիտասարդին դառնալով : « Տիգրան դեղնեցաւ , դէմքը խիստ խոժոռ երեւոյթ մը առաւ ու կատարեալ բարեկրթութեամբ խոնարհութիւն մը ըրաւ իր բարեկամին կնոջ , բայց չի պատասխանեց : Աննախատեսելի դիպուածով դէմ առ դէմ կը գտնուէր այն միակ կնոջ՝ զոր յաւիտեան չի տեսնել ուխտած էր եւ Սուրբիկ կարդաց անոր խոժոռած դէմքին վրայ իր դժկամակութիւնը :

Երիտասարդ փաստարանին համակիր մը տերմաց մէջ շատոնց ի վեր առաջին տեղը կը բռնէր Սուրբիկի ամուսինն : Անգէտ այն աղետաւոր պատմութեան որոյ իր կինն անողը դիցազնուհին ու Տիգրանի բարեկամն անմեղ զոհն եղեր էին , եւ որ անշուք ու մոռացեալ հողակոյտին մէջ ծածկուած էր , Արամ էֆէնտի առաջին տեսութենէն ի վեր անսահման համակրութիւն ունեցեր էր Տիգրանի համար : Գիտուն , ծանրաբարոյ , ինքնօգնութեամբ ձեռք բերած իր

բարձր պաշտօնն, որու համար պահանջուած արժանիքէն աւելին ունէր, ծերունի պաշտօնատարը մեծապէս կը յարգէր անոնք որ իրեն պէս միայնակ ու անօգնական յառաջացած էին ընկերութեան դժուարամասշտելի դասերուն մէջ:

Անկողմնակալ ու ձեռնահաս դատաւոր գործով ամէն արժանեաց ու կարողութեանց, մէկ նայուածքով գուշակեր, ճանչցեր ու գնահատեր էր երկուստարդին մեծ տաղանդն ու մեծագոյն ապագայն: Անոր ազատ ու հմտալից խօսուածքը սիրեր, կըծու ու հեգնող բառախաղութիւններէն ախորժեր ու վճռական ու ծայրայեղ դիտողութիւններն համաձայն գտեր էր իրեններուն:

Այսպէսով կազմուէր էր այն հաստատ բարեկամութիւնը զոր ամէն առթիւ ցոյց տուած էր երկուստարդին եւ որ քիչ քիչ հայրական գործմանց փոխակերպէր էր: Արդարեւ Սուրբիկի ամուսինն հիմա յիսունի մօտ պէտք էր լինիլ:

Արայն կարծես երկուստարդը չէր ճանչցած լիովին անոր մտերմութիւնը. միշտ յարգալից այլ միշտ քաշուած՝ չէր պատասխանած անոր համարձակ անկեղծութեամբը: Զորօրինակ իր անթիւ թախանձանաց վրայ բնաւ չէր գացած անոր տունը. եւ չէր ճանչցեր անոր ընտանիքը:

Տիգրան այն գիշերն առաջին անգամ լինելով կը պատահէր այս կնոջ: Ինքնիրեն երեւակայեր էր երբեմն զայն գեղեցիկ, շատ գեղեցիկ ու նոյնքան վատ ու անմիտ: Այս տեսութեան մէջ Տիգրան իր դատողութիւնը մասամբ միայն կրցաւ հաստատել. յիշաւ գեղանի կին մ'էր երկուստարդութեան ու վայելչութեան բոլոր հրապոյրներովը, բայց չի կրցաւ անոր խօսակցութիւնը սեթեւեթ ու սնուի վճռել. ընդհակառակն պարտաւորեցաւ ինքնիրեն խօսողանիլ թէ լաւագոյն ընկերական դասուն մէջ հազիւ անոր մի քանի նմանեաց հանդիպեր էր: Սակայն Տիգրան անձնատուր չ'եղաւ այս նպատակաւոր դատողութեան՝ զոր առանց կամենալու կազմեր էր. նըրբամիտ, հրապուրիչ եւ խելացի կին մ'էր թերեւս, բայց երբէք Տիգրան չէր կըրնար մոռնալ այն տարաբաղդ վերջաւորութիւնն՝ որ իր թշուառ բարեկամին վիճա-

կեր էր: Ուստի կծու ու խորիմ կերպով պատասխանեց անոր, եւ իր խօսքերով դաշոյնի հարուածէ աւելի խոր արիւնեք անոր սիրտն: առանց սակայն բառ մ'արտասանելու անցելոյն վրայ:

Մանկամարդ կինը խռովեցաւ, այլ չ'ընկճեցաւ. Տիգրան արցունքի կաթիլ մը նըշմարել կարծեց անոր գեղեցիկ աչքերուն մէջ երբ անհաստատ ու ուխտադրուծ աղջըկանց ակնարկութիւն մ'ըրաւ:

— Որչափ ալ խիստ ըլլայ ձեր վճիռն, ըսաւ Սուրբիկ տրտմութեամբ, ես զայն անիրաւ համարողներէն չ'եմ: Որչափ ալ անփորձառու աղջիկ մը լինի ուխտադրուծ անձն, անոր յանցանքն ո՛չ ոք ինձմէ աւելի անքաւելի կը դատէ. ուրիշ մը իմ տեղս կրնար ձեզ պատասխանելով ըսել թէ դէպքերը կամեցողութեւնէ զօրաւոր են, թէ նորաւի աղջիկ մը, ենթակայ ամէն տեսակ ճշմանց, գուցէ ամէնէն տկար էակն է պատահմանց դիմագրաւելու համար ու պէտք չ'է մէկ յանցանքով մ'ըւրանալ անոր ազնիւ զգացումներն. ո՛չ, ես ասոնց եւ ոչ մին կ'ըսեմ. ամէն յանցանք իր պատուհասն իր ծոցին մէջ կը կրէ. ի՞նչ հարկ անդ ութ ու անողորմ լինել յանցաւորին դէմ երբ ճակատագիրն ամէնէն աւելի անողորմ է անոր: Պէտք է մոռնալ, այո՛, յաւիտեան պէտք է մոռնալ զայն, քան թէ խոր քննել անոր ողորմելի կացութիւնը: Թերեւս անգութ մնալու սիրտը չ'ունենաք եւ կարեկցութեան արժանի դատէք թշուառութիւն:

Տիգրան այս լեզուին չէր սպասեր. կարծեր էր թէ Սուրբիկ ինքզինքը պիտի պաշտպանէր իր յարձակմանց դէմ. սխալէր էր. նա այնպիսի բարձր ու վսեմ մտածութիւններով պատասխանեց որ Տիգրան բառ մը չի գտաւ աւելցնելու:

Յիշաւի նշանաւոր մէկն էր այս կինը, նորա զգացմանց բարձրութիւնը չի ճանչնալ կարելի չ'էր: Խօսք մը չի գտաւ պատասխանելու. թերեւս ունէր շատ ըսելիքներ, բայց ամուսնոյն ներկայութիւնը կ'արգիլէր աւելի յառաջ երթալէ. ուստի խօսակցութեան նիւթը փոխեց:

Տիգրան իր պաշտօնին ու ասպարէզին բերմամբ մարդուս հոգեբանական զգացում մը, զօրութիւնը, տկարութիւնն եւ բարե-

չըջուր ճանչցող և ուսումնասիրող մէկն էր :

Զարմանք դիտեց այս դեռատի ու դեղանի կիներ՝ որոյ արտաքին վայելչութեանը վրայ կ'աւելնար բարձր դաստիարակութիւն մը : Տարօրինակ գաղտնիք մ'էր անշուշտ, որ այսքան կատարելութեամբ օժտեալ կիներ թերանար ամենանուիրական խոստովանքի մը մէջ ու սովորական խաբէրայ մը լինէր : Իգական սեռին յատուկ տկարութիւն մ'էր այս թէ հրեշտակի կերպարանքին ու ձեւերուն ներքեւ ծածկուած վատթարագոյն էակ մ'էր իր դէմինը :

Երեկոյթը վերջանալուն Տիգրան աճապարեց ամէնէն առաջ խոյս տալու, բայց այցելութեան խոստում մը չի տուած՝ իր ծերունի բարեկամին ձեռքէն չ'ազատեցաւ :

Յուզեալ ու խռովեալ զատուեցաւ . իր համոզումը ծանր հարուած մը կրեւ էր այն գիշեր : Մինչեւ այն օր անարժան արարած մը նկատած անձը լաւագոյն եւ աղնուագոյն զգացումներու տէր մէկն երեւցաւ իր աչքին : Ի զուր ջանաց մաքառել այս տղաւորութեան դէմ, ի զուր ջախջախիչ աղաւցոյցներ որոնեց ու գտնել կարծեց անոր դէմ, ի զուր իր տարաբաղդ բարեկամին սրտակտուր վախճանը յիշեց . սիրտն ու համոզումն ապստամբ մնացին մինչեւ վերջը :

Թերեւս Սուրբիկ բռնութեան մը զոհն էր, թերեւս հնազանդութիւնը բարձրագոյն ու գերագոյն հարկ մ'էր անոր ամուսնութեան միջոցին : Ո՞ր դիտէ, ամէն ենթադրութիւն ներելի էր . խոստովանեցաւ ինքնիրեն թէ առանց անգամ մը խօսեցուցած լինելու այս կիներ, արդարացի չ'էր վերջնական կերպիւ դատապարտել զայն : Այցելութիւն մը խոստացած էր . կրկին տեսութեան պէտքն ու յոյսն զգաց, սակայն չի կրցաւ քննալ այն գիշեր, խառն ի խառն երազներ իր նիրհը վրդովեցին : Իր ցնորքներուն մէջ պահ մը կը տեսնէր Սեդրաք ցուրտ ու խոնաւ վարձու սենեկի մէջ առկայծ կանթեղի մը լուսով աշխատող, պահ մը կը յիշէր զայն երբ իր պաշտօնատեղիէն կը վերադառնար առանց կարենալ հաւատալու դեռ իր դժբաղդութեան մեծութեանը, կը տեսնէր զայն տփզոյն ու դողդոջուն երբ անոր սիրուհին իր նորա-

պակ ամուսնոյն թեւին յենած խորտառ հպարտ անոր առջեւէն կ'անցնէր :

Շարաթ մը տեսեց իր այս անհանգիստ կացութիւնն . ի վերջոյ որոշեց այլ եւս չի մտածել այս մասին . ի՞նչ փոյթ իրեն թէ այս կինը բարի կամ չար արարած մ'էր . իր բարեկամը մեռած եւ այս կինն ամուսնացած էր . լաւագոյն էր մոռնալ այս աղէկը . տուր պատմութիւնն որ իր երիտասարդութեան տարիներուն հետ այնքան սերտ կապակցութիւն մ'ունեցեր էր : Իրեն չ'էր իյնար դատաստան ընել ու վճիռ տալ :

Բայց այս ստալագրութիւնը չի կրցաւ գործադրուիլ . հարկ էր արդեօք իր բարեկամին կենացը մէջ խաղացած տխուր դերին վերագրել այս կնոջ յիշատակը մոռնալու անկարելիութիւնը, չ'էր զիտեր . բայց սա ճշմարիտ էր որ անոր հետ ունեցած տեսակցութիւնն անջնջելի կերպով արմատացած մնաց իր մտքին մէջ . անոր շարժումները, ձեւը, խօսուածքը, ձայնն աչքին առջեւն էին շարունակ . « Թերեւս դուք ալ անգութ լինելու սիրտը չ'ունենաք ու կարեկցութեան արժանի դատէք թշուառուհին » ըսած էր Սուրբիկ իր անձին տկնարկութիւն մ'ընելով :

Յիրաւի թշուառ էր արդեօք . եւ ինչո՞ւ համար : Բայց ինք ի՞նչ կը հետազօտէր անոր ընտանեկան կեանքն, ի՞նչ կը վերաբերէր իրեն . թշուառ կամ երջանիկ, անոր գիտնալիք բանն էր . ո՛չ սակայն, պէտք էր իմանալ թէ այդ յանցաւոր կինը գոնէ խղճի խայթ մը չ'ունէր . այս հարցումները բոլորն ինքնիրենն ըրաւ եւ իր անհանգիստ հետաքրքրութիւնը մեղադրեց, բայց չի կըրցաւ մէկդի ընել : Արկին տեսակցութեան մը ակնկալութիւնը դաւ զգամ զօրացաւ իր սրտին մէջ . ամէն օր կ'որոշէր այցելութիւն մ'ընել եւ ամէն օր կը յապաղէր . օր մը մինչեւ Սուրբիկին տան մօտերը գնաց ու չի համարձակեցաւ դուռը զարնել, եւ ետ դարձաւ :

Այն ատեն երկշոտ անձկութեամբ մը իր սիրտը քննեց ու մէկէն խորին և յայտնի կարեկցութիւն մը, համակրութիւն մը նըշմարեց այս կնոջ մասին . կարեկցութիւն . . . անշուշտ, ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ . . . ու վախցաւ, ամէնցաւ թերեւս ինքնիրեն իր յիմար սէրը խոստովանելու . . . :

Ի՞նչ, սիրե՛լ այն կինն՝ որ իր միակ մըտերմին ատեն մը սիրուհին էր ու հիմա իր ամէնէն աւելի յարգած անձին ամուսինն էր։ Տիգրան իր յանցանքին մեծութենէն սարսափեցաւ . խղճմտանքն ու պարտակոնութիւնն իրենց խիստ եւ որոշ ձայնը լսեցուցին։ Տիգրան ինքզինքէն խոյս տալ ուզեց իրրեւ մեծագոյն չարագործէ մը, ինքզինքը յանդիմանեց, պարսաւեց . ո՛չ, ինքն այնչափ վատ մը չ'էր եւ չ'էր կրնար լինիլ, անտարակոյս խաբուած էր իր ճանաչողութեան մէջ . սիրե՛լ, ո՛ւսկից գտեր էր այս յոռի գաղափարը։

Ահաւոր ու երկարատեւ պայքար մը տըրուեցաւ իր հոգւոյն մէջ, քարսիրտ և օտարական բժիշկի մը պէս ինք անձամբ քննել ուզեց իր վէրքին ծանրութիւնն եւ պարզապէս մահացու և անբժշկելի գտաւ զայն։ Աւեր համոզուեցաւ որ այս կինն իր ճակատագրին կ'իշխէր, երբ ճանչցաւ թէ իր սէրն ուրանալն անօգուտ էր այլ եւս, այն ատեն իր ցնորած մտքին մէջ իր պարտականութիւնը փնտռեց ու չի գտաւ։

Անշուշտ յանցաւոր մ'էր, ո՛ր եւ է գըթութեան անարժան յանցաւոր մը այս կինը սիրելուն՝ որ պէտք էր իրեն համար կըրկնակի նուիրական ըլլալ։

Այս անակնկալ ու դժբաղդ սիրոյ հետեւանքը բոլոր իր արհաւիրակից ու կսկծալից պարագայներովն երեւցաւ իր աչքին։

Ինքն՝ որ այնքան յաջողակ էր ուրիշները սլաշտպանելու արուեստին մէջ, զարմացաւ որ ինքզինքն արդարացնելու բան մը չ'էր գտներ . յանկարծ սպառնալից ոտուեր մը տեսնել կարծեց . . . Սեդրաքն էր որ իր բարեկամութեան համարը կը սահանջէր իր մէջ։ Ո՛չ, փրկութեան ճամբայ մը չի կար, եւ անգութ դատաւորի մը պէս ինքն ամէնէն ծանր պատիժը տնօրինեց իր անձին։

Անձնասպանութեան գաղափարը պահ մը անխուսափելի յամառութեամբ մը իր վիտքը պաշարեր էր։ Տիգրան Ժան-Ժաք Ռուսոյի աշակերտ մ'էր եւ ապրելու քաջութիւնն ունեցաւ . մեռնիլը վաղ կամ անագան դրած էր, հարկ չ'էր զայն փութացընել, որոշեց միայն այլ եւս չի հանդիպիլ այս կնոջ ու թէ որ անկարելի անոր պատկերն իր յիշատակէն ջնջել, թէ որ անհնար էր մոռնալ անոր ներգաշնակ ձայնը, լաւ

ուրեմն, ինքնիրեն միայն պիտի քաշէր ան ծանօթ ու մէկ սրտի մը մէջ միայն ամբողջ ուած սիրոյ մը բոլոր դառնութիւնն եւ այլ եւս չը պիտի տեսնար Սուրբիկը։

Անտարակոյս տխուր ու գովելի քաջութիւն մ'էր այս հաստատ որոշումն որ միայն կրնար համաձայնիլ խտտապահանջ պարտականութեան մը ձայնին։

Տիգրան Սուրբիկի բնական գիւղին մէջ բայց հեռաւոր արուարձանի մը մէջ կը բնակէր։ Այս հեռաւորութիւնը բաւական չը համարեց . փողոցին մէջ, չըջագայութեան մէջ, այցելութեանց մէջ կրնային իրարու հանդիպիլ ու Տիգրան փախստական ոճրագործի մը շտապաւ հեռացաւ այդ տեղերէն ու Պէոյիւր-Տէրէ գնաց բնակելու։

Բայց տարաբաղդը չ'էր հաշուած այն գըծընդակ փորձին բոլոր ծանրութիւնն՝ որու դատապարտած էր իր կեանքը։ Սուրբիկը տեսնելու բոլոր յոյս ու ակնկալութիւն վերջանալուն հետ ճանչցաւ իր սիրոյն ու տառապանքին մեծութիւնը։

Ամէն ինչ ի գործ դրաւ մոռնալու համար եթէ ոչ իր սէրը, գոնէ իր անձը. նոր եռանդով մ'ընդգրկեց իր միակալից ասպարէզը, բայց զգուանք ու տաղտկութիւն գըտաւ հոն՝ ուր ատեն մը ամէնէն մաքուր գոհունակութիւնը կը գտնէր . աննպատակ երեւցաւ կեանքն ու մաքառելէ ճանձրաբացաւ։ Մի քանի տարուան մէջ բաւական հարստութիւն մը ձեռք բերեր էր, որոշեց գործէ քաշուիլ եւ ալ զայն խիստ քիչ անգամ տեսան դատաւարութեանց մէջ։

Ատեն մը ամէն մտային աշխատութիւն դադրեցուց, իր աշխատութեան սենեակը ոտք չի կոխեց, գրական ամէն պարտում վերջացուց . եւ ուզեց ձեռքի աշխատութիւններով իր անձը յոգնեցնել ու զբաղեցընել . իր ծովեղերեայ տան սլարտէզին մէջ օրն ի բուն կը տեսնէին զինքը՝ որ տոկուն գործաւորի մը պէս կ'աշխատէր . ի՞նչ կը մտածէր արդեօք երբ խոնջած ու քրտնաթոր հանգիստ կ'առնուր ծառի մը տակ, ակնարկը սեւեռած ծովուն երերածուփ կուհակաց վերայ։ Իրիկուան դէմ չըջագայութիւն կ'ընէր հետիոտն կամ ձիով, կ'երթար որչափ որ կարելի էր հեռուն երթալ, բայց նախամեծար կը համարէր ամայի ու խոպան վայրերը . բազմութիւնը զինքը կը զայրա-

ցընէր ու ամէն մարդկային ձայնէ իբր մէջա-
սակար ու չարագուշակ հնչիւնէ մը կը խու-
սալիէր :

Անցան քսան ամիսներ այս տրտում եւ
անսիրտ կեանքով . դարունը կը յաջորդէր
ձմեռուան ցուրտ ու խոնաւ օրերուն , օ-
դերը պայծառացան , Վոսփորի ամիսները
դաւարեցան ու գեղեցկացան , եւ ամառ-
ուան սովորական հիւրերը Պէօյլը-Տէրէ
վերադառնալով նոր ոգեւորութիւն մը բե-
րին այս պահ մը ամայացած եզերքներուն :

Տիգրանի Պէօյլը-Տէրէյի մէջ բնական
տան կռնակը , քիչ մը աւելի վեր , ամառ-
ուան համար ուրիշ կոկիկ ու փոքրիկ քէօջը
մը կար պարտէզներու մէջ առանձնացած ,
Այս քէօջը բաւական ժամանակէ ի վեր
պարապ՝ հինցած ու տխուր երեւոյթ մը
ստացէր էր . անոր տէրերը կենդանութեան
նշան ցոյց տուած չէին եւ ոչ իսկ անգամ
մ'այցելելու եկած այս սիրուն բնակութիւնն
որ ճաշակի տէր մարդու մը ստացուածքն
էր անշուշտ : Տիգրանի տան ետին , աւելի
բարձր ու բոլորովին ծովահայեաց դիրքով ,
ընդարձակ ու զառիվեր պարտէզի մը մէջ ,
վայրի չափանակի ծառերէ կազմուած նեղ
ու խորհրդաստուեր ուղիներով , առջեւ
հարթ ու ուղիղ , ուր 6-7 հատի չափ տե-
րեւախիտ ու հովասուն ծառեր չուք կու-

տային եւ որ կարծես ծովուն մէջն էր , այս
մենակեաց բնակութիւնը մարդատեաց՝ բայց
բնութեան գեղեցկութիւն ճանչցող մար-
դու կը վայլէր : Անոր զմայլելի տեսարանը
նոյն իսկ Վոսփորի մէջ չէր գտնուեր . մէկ
կողմէն մինչեւ Սեւ ծովու փոթորկեալ ա-
լիքն , միւս կողմէն Ասիական եզերքն իր
դաւարեալ բուրաստաններով , Պէյքօզէն
մինչեւ Քանտիրլի , ահա անոր հազուադիւտ
ու աննման տեսարանը :

Ամառուան սկիզբները շարժում մը տես-
նուեցաւ այս լճին ու լքեալ բնակութեան
մէջ : Նորոգութիւն մը կը կատարուէր հաս-
ճեալ ու փութաջան գործաւորներով : Մէկ
երկու շաբթուան մէջ , պարտէզը խնամով
շտկուեցաւ , քէօջը նորոգուեցաւ , ներկը-
ուեցաւ ու կահաւորուեցաւ : Տիգրան՝ դը-
րացի մը ունենալու հաւանականութիւնը
գրեթէ ուրախութեամբ տեսաւ : Երկու
տարուան առանձնութիւնը դայն կերպա-
րանափոխ րբեր էր : Մշտատեւ տխրութիւնն
ու անորութիւնը կրնային ծանր հետեւու-
թիւններ ունենալ եւ Տիգրան առանց աղ-
մուկաց ընկերութեան մը մէջ նետուելու ,
իրեն պէս առանձնասէր ծանօթի մը հետ
տեսութեան պէտքը կ'զգար :

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

(Շարունակէ)

ԲԱՐԻՁԻՆԱ

ՎԷՊ LORS ՊԱՅՐԸՆԻ

ԺԵ .

Վտնաց զանգակըն զօղանջեալ տըխուր եւ յամբը զանչիւր
ի մութ եւ լըրթաղոյն աշտարակին տատանէր ,
Որ էին հընչեւց ի սիրտ ողորմ բարբառով :
Օ՛ն միտ դի՛ք , է՛սս նըւագ վախճանելոցն ազդարար ,
Եւ կամ կենդանեաց՝ որոց հասցէ՝ մեռանել :
Վասն հոգւոյ , որ ընդ հուալ ելանիցէ յաշխարհէ ,
Երգոց մահու բարձրանայ ձայն , տըխուր զանգակըն գանչէ .
Ի հուսկ կէտըն ժամանեալ , կայ ի ծուռ յոտս երկուն :
Դիպուած՝ դառն ի պատմել , եւ աղէկէզ ի տեսիլ .
Ի վերայ ցուրտ եւ մերկ հողոյ ի գուճս անկեալ կայ խոնարհ ,

Փայտ մահու կանգնեալ հանդէպ, եւ պահապանք պատեալ շուրջ,
կայ դահիճն անդանօր ի հարկանել պատրաստեալ,
Բազուկքն են մերիւր, զի շեշտակի լիցի հարուածն եւ անվրէպ:
Զըննէ զսայր տապարին՝ զոր սըրեաց անդ ի ժամուն,
Անդ ամբոխըն խըռնի՝ շուրջ բակ առեալ լըռութեամբ,
Ի տեսանել ըզմահ՝ որդւոյն՝ վըճռեալ յիւրմէ ծընողէն:

ԺԶ.

Քաղցր է ժամն՝ մինչ չեւ տրեւն ամառնային խոնարհեալ
լուսաստիւռ բարձրանայ ի չարաշուք յայնմ աւուր:
Եւ իբր ի հենդն ընդ դիմաբար ըզճառագայթսըն ծագեալ՝
Ի մահապարտ գլուխն Հիւկոյի սըլիւէ ըզողդ երեկին,
Մինչ առ երէցըն խոտովան լինի զմեղան հուսկ նըւագ,
Եւ սուրբ զըղջութեամբ զիւրն ըզվըճիւ ողբալով
խոնարհ ծընրադրութեամբ լըսէ զաղօթս արձակման
Որովք մահացու արատք մեղաց մեր սրբին:
Նըշողէ արեգակն ի գլուխն ըզգաստ եւ խոնարհ,
Եւ ի ծամըս վարսիցն հարեալս ի գոյն արջնաթոյր,
Որ ըզմերկ ուլամբ իւրով վէտ վէտ անկեալ խաղային:
Բայց նըշոյլքն մանաւանդ լուսաճաճանչ ցոլացեալք
Ի վերայ առապարին՝ որ կայ փայլեալ առնթեր,
Պայծառ եւ ահաւոր լուսով շողալ տան նըմին:
Ո՛հ քանի՜ դառնագոյն է այն վերջինն հասեալ ժամ:
Ըզկարի իսկ անըզգայս կալաւ դողումն եւ սարսուռ:
Յանցուածն է զըժպընի, արդարադատ է վըճիռն,
Այլ այդ տեսարան սոսկումն ի սիրտ տրկանէ:

ԺԷ.

Աւարտեալ վըճարեաց ըզվերջին բանս աղօթից՝
Որդին հայրանենդ — ապերասան տարփածուն:
Ասաց ըզվարդարանն, ըզմեղան եղեւ խոստովան,
Եւ ժամուցն յետին վայրկեանքն ահա եկեալ մերձեցան:
Հանին նախ մերկացուցին ըզվերարկուն ի յանձնէն,
Եւ ահա խըզեսցեն ըզթուխ վարսիցըն գանգուրս:
Վըճարեցան — հատեալ գիսակը անկան ի սայր մըլիրատին:
Ըզճածկոյթ հանդերձիցն՝ զոր մինչեւ ցայն վայր բառնայր,
Թիկնոցն ի ձեռաց Բարիզինայ տուեալ ձօն,
Ոչ ըզնա զարդարեսցեն յուղարկաւորք ի շիրիմ:
Զի ահա յափըշտակեալ զայն իսկ ի բաց ընկեցին:
Եւ կամին թաշկինակաւ ըզնորա զաջսըն կապել,
Բայց ոչ — ըզնուաստութիւնդ յետին մերժէ խոթխտանօք:
Զըզգացմունս իւրոյ սըրտին սանձահարեալս մինչ ցայն վայր
Խորին քամահանօք կէս մի պարգեալ մերկանայ,
Ի պահուն մինչ մերձենայ դահիճն ի զաջսըն կապել,
Որք չուենն պէտս ինչ այնմիկ, եւ զմահ տեսցեն աներկիւղ:
« Ո՛չ — իշխանութիւն է քո յիմ կեանս եւ յարիւն,
« Զեռք իմ կան կաշկանդեալք — բայց սակայն թոյլ արա ինձ
« Մեռանել համարձակ ազատ աչօք — աղէ հարս »

Զոյգ ընդ բանին ետ ըզգըլուին անդէն ի փայտըն մահու .
 Այս եղեւ Հիւկոյի յետին բարբառ . « Աղէ հա՛ր : »
 Եւ տապարըն փայլուն իջեալ անկաւ ի վերուստ .
 Գլուխըն գլորեցաւ եւ ջերմ մարմինն արիւնոտ
 Ի վայր տապալեալ թաւալեցաւ ընդ փոշի .
 Ի մէն մի երակաց աղբերացեալ ուղիւսօրէն
 Անձրեւ արիւնաների բոսորագեղ հոսեցաւ .
 Կարկամեալ աչքն եւ շրթունք խըլըրտեցան վայրկեան մի ,
 Եւ ապա մինչ իսպառ անշարժ կացին մընացին :
 Մեռաւ նա , որպէս արժան է մեռանել ում մեղաւ ,
 Առանց զրպարտութեան եւ յընտի պերճանաց :
 Հեղութեամբ խոնարհեալ եկաց յաղօթս առ Աստուած .
 Ոչ խոտեալ արհամարհեաց զօժանդակող քահանայն ,
 Եւ չեհատ յաստուածային բարձրութեան ըզյոյս իւր :
 Եւ յորժամ ծունըր կըրկնեալ կայր առաջի երիցուն ,
 Յերկրաւոր խորհըրդոց ունէր ըզիւրտըն մարբեալ :
 Զայրադին հայրն եւ սիրելին զի՞նչ էին անդ յաչըս իւր .
 Ոչ եւս այլ կըշտամբանք — ոչ եւս անյոյս անձկութիւն .
 Ի՞նչոր միտքն յերկինս յածին — աղօթք են բանքն ամենայն :
 Միայն խօսք դուզնաքեայք շրթանցն եղեն լըսելի
 Մինչ մընայր մերկացեալ դահճին անգութ հարուածոյն
 Եւ խընդրէր մեռանել առանց աչացըն կապոյ ,
 Այս յետին ողջոյնքն եղեն առ տեսանողըս մահու :

ԺԸ .

Անբարբառը հանգոյն շրթանցըն փակելոց յօրհասէն ,
 Համօրէն հանդիսատեսքն ըզուսն իւրեանց արգելին .
 Բայց սարսուռ երերադին ընդ խուռն ամբօխն ընթացաւ ,
 Յորժամ էջ մահառիթ հարուածն ի գլուխ այնորիկ ,
 Ոյր կեանքն եւ սէր այսօրինակ մահուամբ վախճան ընկալան .
 Հատկըլեալ հառաչք բնաւից հեղձուն ի սիրտըս նոցին :
 Անդ ոչ այլ ազգողական բարբառ եղեւ լըսելի ,
 Բայց արխուր տապարին ձայն՝ թընդեալ ի կոճղըն մահու .
 Եւ զի՞նչ աղաղակդ իցէ , որ զօղս հերձանէ .
 Աղաղակ յիմարութեան կամ սոսկալի սարսախման .
 Զերդ ձիչ մօր՝ որ կորոյս զորդին յանկարծ խիստ մահուամբ .
 Գոչիւն բարբառոյն մինչեւ յերկինս ամբառնայր :
 Իբր ոգւոյ յոյր վերայ անհընարին եհաս տաղնապ՝
 Ի ներքուստ պատուհանաց տապարանիցն Ազոյի
 Եղեւ լըսելի ահագնալուրն այն բարբառ .
 Եւ աչք ամենեցուն անդրէն յայն կողմըն դարձան .
 Բայց աղմուկն եւ տեսիլն ի միասին լըսեցին :
 Աղաղակ կընոջ էր այն — անյուսութեան չէր բընաւ
 Քան զայն սոսկալի գոչիւնս երբէք արձակեալ .
 Եւ լըսողքն ըզբարբառ աղաղակին այնորիկ ,
 Գորովեալ մաղթեցին թէ այդ յետինն լինիցի :

ԺԹ .

Ոչ եւս է Հիւկոյ . եւ յայնմ օրէ եւ յապայ

Յապարանս ի դահլըճին եւ կամ ի դրախտ պարտիզին ,
 Երեսը Բարիզինայ երեւեցան ինչ երբէք :
 Անուն իւր , իրրեւ այն թէ չէր բընաւ խկ եղեալ ,
 Ի չըթանց եւ լըսելեաց ամենեցուն մերժեցաւ .
 Իբրեւ խօսք՝ զոր արգելուն պարկեշտութիւն կամ երկիւղ ,
 Ոչ ուրեք ամենեւին որ զիշխանին Ազոյի
 Լըւաւ ըզխօսելն ըզլընջէն կամ զորդւոյն .
 Եւ ոչ ամիտիեալ ի սուրբ տեղւոյ թաղեցաւ
 Գէթ ասպետն՝ որ յաւուր յայնմիկ ի մահ մատնեցաւ :
 Բայց բազդ Բարիզինայ եկաց ի սպառ թաքուցեալ
 Զերդ փոշին մեռելոց ընդ տախտակաւ դադաղին :
 Արդեօք բնակեցաւ ի վանս ուրեք արգելեալ ,
 Եւ խիտ ճըգնութեամբ յերկնից ներումն ընկալաւ
 Զամրս բազումս ապաշաւեալ եւ տաղնապեալ ի խըղճէ ,
 Խարազանաւ , ծոմապահօք , անքուն ըզցայգս արտասուեալ
 Կամ մեռաւ դեղով մահու , կամ ըսպան զինքըն սըրով ,
 Ի պատիժ պատուհասի չար եւ յանդուգըն սիրոյն .
 Եւ կամ ոչ երկարատեւ ինչ նեղութեամբ տանջեցաւ .
 Եւ հարուածն որ հատեալ կարճեաց ըզկեանս Հիւկոյի
 Վախճան կոտորածի արար նորուն խկ կենաց .
 Եւ գըթութիւն երկնից ետ թոյլ՝ զի սիրտն յանկարծ պատառեալ ,
 Ըզվիշտ նեղութեանց իւրոց ի բաց բառնայցէ ,
 Ոչ որ զայն գիտէ , եւ ոչ ամենեւին գիտացէ :
 Բայց որ զի՛նչ եւ վախճան նորա եղեւ ի յերկրի ,
 Յաղէտս ըսկըսեալ կատարեցան կեանք նորա :

Ի .

Եւ եգիտ ինքեան Ազոյ գայլ ամուսին որ ընկեր .
 Եւ այլ հայլ որդեկաց աճեալ սընաւ առ նրմա .
 Սակայն ոչ որ ի նոցունց այնպէս չըքնաղ եւ արի ,
 Որպէս զայն՝ որ թառամեալ ի դամբանին ըսպառէր .
 Թէ եւ ընտիրք եւս իսկ էին , ի դարգացումն նոցին
 Հայեցաւ անխըտիք , կամ հատկըլեալ հեծութեամբ :
 Այլ ոչ եւս ամենեւին արտօսր ըզգէմըն ակօսեաց ,
 Եւ ոչ ի ճակատ նորին ծիծաղ ծաղկեցաւ .
 Եւ ի պերճն այն լայն ճակատ ըզխորչս արկին անդամունք .
 Հրատոչոր խոփով ցաւոց ակօսք պեղեալք տարաժամ ,
 Վէրք միտաց կեղեքելոյ , զոր ըզլընի իւր թողու
 Հոգւոյն պատերազմն . անցին նորա խինդք եւ ցաւք .
 Եւ ոչ այլ ինչ մընային նրմա աստէն յաշխարհի՝
 Բայց միայն անքուն գիշերք եւ տաղտկալից ծանր աւուրք .
 Ոգի՝ առ նախատինս եւ առ գովեստս անըզգայ ,
 Սիրտ յանձնէն փախըստեայ , ամբանաց ատեցող ,
 Անկարող ի մոռանալ , եւ ի խորհուրդս ընկըզմեալ ,
 Եւ ի յոյզս սաստիս բաղմամբտանդ անձկութեանց .
 Ի պահուն իսկ անգամ յորում թըւէր հանդարտեալ ,
 Սառնն պինդ՝ միայն զերեսըս ջուրց դործէ թանձրամած .
 Իսկ ի ներքոյ կենդանի ջուրք գընան դարձեալ , եւ գնացեն .

Նոյն եւ սիրտ նորա պաղէալ՝ անդադար կայր ըմբռնեալ
 Ի խորհրդոց՝ զոր բռնութիւն արմատացոյն այնպէս խոր ,
 Զի ջրնջել չըկարեմք , որպէս եւ ոչ զարտասուս :
 Յորժամ ճիգն անձանց դործեալ՝ անդէն յընթացս արգելումք
 Ըզորրտաբուխ հոսանքս ջուրց , ոչ ցամաքին ինչ նորա ,
 Այլ արտասուքն այն վարեալք յետս՝ յիւրեանց աղբիւրն դառնան ,
 Անդ ի բիւրեղ յըստակադոյն եւ ի յատակ խորագոյն
 Կան մընան աներեւոյթք եւ անխաղացք , բայց պայծառք ,
 Եւ այնքան յորդառառք , որքան անտեսք են աչաց :
 Յուզեալ ակամայ կամօք ի ներքս ի հոգին
 Կարօտով այնոցիկ՝ զորս ինքն ի մահ էր մատնեալ :
 Ասիկար ի լընուլ ըզցաւագինըն պակաս ,
 Անյոյս ի գտանելոյ զնոսա ի յարկըս վերինս
 Ուր արդարոց խըմբին հոգիք . եղեալ ի միասն հաստատուն
 Թէ վրձուեաց զարժանաւոր դատակրնիքն մահու ,
 Թէ ինքեանք միայն եղեն պատճառք իւրեանցն աղետից .
 Բայց եւ այնպէս Ազոյ ըզկեանս անցոյց թշուառ ծերութեամբ :
 Ըզառնարթըս վընասեալս թէ ճարտար ձեռն հատանէ ,
 Ծառն ըզգենու զօրութիւն նոր , դաւարացեալ ուռձազարդ :
 Այլ թէ չանթ ի բարկութեանն հարեալ զուղէլն կիզու ,
 Ի չորացեալ մնացորդ բընոյն եւ ոչ տերեւ մի չաքէ :

Թարգմանեաց

ՎԵՐՋ

ՊՕՂՈՍ ՄԻՍՔՅԻՆԱՆ

ԳԱԽԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

ՃԱՆԻԿՈՒ ՀԱՅ ԳԻՒՂԵՐՈՒ ԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ

ԵՒ ՆՈՐ ՄԱՐԳԱՐԵՈՒ ՀԻՆԵՐ

Պոնտոսի գաւառին Հայ գիւղերն , ի բաց
 առեալ Մարգուանու եւ Ամասիոյ մօտա-
 գոյններն , որք քաղաքաց մօտ լինելով ուղ-
 ղակի կը վայելեն նոցա բարոյական ազդե-
 ցութիւնն , եւ քիչ շատ հեռի են սնապաշ-
 տութիւններէ , նիւթապէս թշուառ վիճակ
 մ'ունենալէ զատ , հեռի են նաեւ բարո-
 յական միջթարութիւններէ եւ կրօնական
 դատարարականութիւնէ : Ընդհանրապէս շատ
 թշուառ կը նկարագրէին Սամսոնի Հայ գիւ-
 ղերն . չպատեհութիւն ունենալով այցելել
 անոնցմէ մի քանին , պարտ համարեցանք
 ներկայացնել զայնս Մարգի պատուարժան
 ընթերցողաց : Սոյն գիւղերն՝ որոց իրարմէ
 հեռաւորութիւնն գրեթէ 15 էն մինչեւ 30
 ըրպէ է , կառավարութեան կողմէ կը դըր-

ուին մէյմէկ ճէթաբներ , եւ հայ կամ յոյն
 Առաջնորդին կողմանէ երբեմն եւս միտ-
 Առաջնորդ տիաղոսով քաղաքայ մը : Դպրոց
 չունին , ուստի 100 ին 95-ը բնաւ կարդալ
 չը գիտեր : Ունին եկեղեցի երբեմն գիւ-
 ղեր , եթէ կրնայ եկեղեցի անուն տրուիլ
 գձուծ : աղտող եւ խոնաւ չէնքի մը : Քա-
 հանայից ագիտութիւնն եւս յոյժ ակներեւ
 է . կան որ իրենց ստորագրութիւնն ան-
 գամ դնել կարող չեն : Ամեն գիւղ կ'ունե-
 նայ մէկ կամ երկու քահանաներ :

Բացի սովորական տօնի օրերէն իւրա-
 քանչիւր եկեղեցի ունի իր յատուկ տօնի օ-
 րերը , յորում կը ժողովին մերձակայ գիւ-
 ղերու ժողովորդն , մեծ հիւրասիրութեամբ
 կ'ընդունուին եւ Հերիսա ըստած կերա-
 կուրն կ'եփեն , զոր մեծ ախորժով իրիկունէ
 մինչեւ առտու կը սպառաստեն եւ առտու
 կ'սկսին ուտել , խմել , պարել : Մէկէն գի-
 նետուններ կը կանգնեն եւ կ'սկսին գինով-
 նալ , որ կը վերջանայ կռուով եւ մեծ ան-
 տեղութիւններով : Առնց վիճակագրութիւնը
 գրութեանս վերջը կը կցենք :

Գանձը այժմ սոյն գիւղերէ ոմանց մէջ յառաջ եկող եւ բազմացող եւ մարդարէութիւն ընող «հինքերու յառաջ բերած սոյն-քարը նկարագրելու, որ մեծ յողովման յառաջ բերաւ այս խեղճ եւ արգահաւելի գիւղացւոյ մէջ: Սամոնի 6 ժամ եւ Զար-շամայի ութ ժամ հեռաւորութեամբ կայ գիւղ մը որ կը կոչուի Ագ-Ալըճ, 60 տուն հայ կայ եւ 50 յոյն. ինչպէս բոլոր գիւղերն նոյնպէս եւ ասոնք իրարմէ զան զատ եւ ուրոյն կը բնակին: Ագ-Ալըճի հայ օրիորդ մը մէկէն կ'աներեւութանայ օր մը եւ մէկ քանի օր ետքը ի յայտ գալով կը պատմէ ասոր անոր թէ՛ ինք Աստուծոյ պատգամ ընդունած է, եւ թէ Հոգին կը թելադրէ զինք հետեւեալներն ըսել իւր աղ-գին եթէ չեն ուզեր պատուհասակոծ լի-նիլ. «Լսեցէք, ո՞վ հայ քրիստոնեայք, եթէ չէք ուզեր որ ձեր արտերն անբեր և պար-տէզներն անպտուղ եւ ձեր կիներն ամուլ մնան, եւ դուք դժոխոց սոսկալի կրակին մատնուիք. Յիսուս Քրիստոս կ'ըսէ ինձ, որ ըսեմ ձեզ թէ նախ չ'ըլլայ թէ ձեր պահը աւրէք, եթէ կրնաք ծով ալ բռնեցէք, քանզի ան աւելի յարգիւ է, ապաշխարու-թեան օրեր է, միսթարներն թող ժողո-վուրդը չը կեղեքեն. քահանայներն աւե-տարանը թող սխալ չը կարդան եւ պատա-րագը պակաս չ'ընեն: Զեր ունեցածներէն ողորմութիւն տուէք. իրարու հետ սիրով ապրեցէք: Աղքատներն ի՛նչ որ տան քա-հանայք եւ միսթարը զայն բաւ թող հա-մարին. եթէ այս պատգամին չը հնազան-դիք, ձեր գիւղը պիտի կործանեմ» եւ: Տէր վահան քահանայն՝ որ բացառութիւն մ'է այն կողմի քահանաներուն եւ ուսեալ ու լուսաւորեալ անձ մ'է, կը կանչէ Եղսա-յին հայրը եւ կ'ըսէ որ «Կերեւի թէ աղ-ջիկդ մոլորած եւ պառկած այրին մէջ վախ-ցած է, կամ հիւանդ ըլլալով ուրիշներուն խօսածներն իր ուղեղը խանգարած են, յանդիմանէ՛, խրատէ եւ եթէ չ'ըլլայ բը-ժըշկի մը տար»։ Հայրը Տէր վահանին ը-սածին պէս կ'ընէ եւ աղջիկը կը լռէ։

Եւ ահա ասան օր յետոյ ուրիշ աղջիկ մը՝ Աղնիւ անուն, կ'սկսի պատմել իւր երազը հոս հոն ըսելով թէ — «Առտուն կանուխ աղբիւրին քով տեսայ ձերմակներ հագած կոյս մը. զիս քաղցրութեամբ կանչեց ու ը-սաւ. Յիսուս Քրիստոս ասկէ առաջ ըյորս Եղսային զրկած էր որ, իրենց գիւղին կոր

ծանումը գիւղացւոց յայտնելով զայնս ա-պաշխարութեան հրաւիրէ. Տէր վահան թէ-եւ աղէկ մարդ մ'է բայց ծոյլ է, չ'աշխա-տիր, անոր մի հաւատար։ Ինչ որ ըսուած է ըրէք եւ եթէ չ'ընէք, ըսէ իրենց, իրենց առեւերն իրենց գլուխը պիտի փլի. պատ-րաստուեցէք եւ պիտի տեսնեք մեծ մեծ գօրութիւններ»։ Տէր վահան աս աղջկան հօրն ալ առաջնոյն ըսածը կը կրկնէ։

ՎՏԱՐԱՆԴԻՆ
(Մնացեալ յաջորդ խոսք)

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐ	
Թիի 21. (Մասն թիւ 3814)	
» 35. » » 3828)	
» 36. » » 3828)	

ԽՆԴԻՐ

Թիի 37.

Դիտենք Օ շրջանակ մը և երկու ուղղանկիւն տը-բամագծեր Ա Բ և Գ Ի (պատկերը չ'իյնալ)։ Գ կետը կը միանան Ա Բ ի վրայ առնուած որ և է Մ կետի մը և սոյն կետէն Գ Մ ի վրայ կը բարձրացնենք ուղ-ղահայեաց մը որ կը կտրէ զշրջանակն ի ֆ և ի Գ. եթէ ֆ և Գ կետերէն շրջանակին շոշափոշները գը-ծենք, սոյն գծերը զիրար կը կտրեն ի Կ։ Գանձը կ'ի հետքն երբ Մ կը փոխուի Ա Բ ի վրայ։

ԽՆԴԻՐ ԹԻԻ 33

ԼՈՒԾՈՒՄԸ

ՔՔՔ և Բ ֆ աղեղներն որք հաւասար են $180^\circ - 2ԱՔ$, իրարու հաւասար են, որմէ կը հետեւի.

$$\text{Աղեղ ՔՔՔ} = \text{Աղեղ ՔՔՔ}$$

եւ $\text{ՔՔ} = \text{ՔՔ}$ ։

Ուրեմն Օ Մ գիծն սոյն լարերու անկեան երկատիւն է եւ ՔՔ ի մէջ տեղէն կ'անցնի։ Որով Մ Օ Բ հաւասար է Մ Բ Օ ի, ունենալով միեւնոյն չափն, $\frac{ԱՔ}{2}$ ։ Մ կէտն է ուրեմն

Օ Բ ի մէջ տեղի ուղղահայեացին վրայ։

Ք կէտը Օ շրջանակին վրայ փոփոխելով, Բ Ք գիծը կ'անցնի նշանակեալ ուղղահայ-

եացին բոլոր կէտերէն, որով և սա է խնդրուած հետքն:

ԹԻԻ 34

Լ ՈՒԾՈՒՄՆ

Պիտի ապացուցանեմ նախ թէ Մ Գ=Գ Գ.
Արդարեւ Գ Մ Գ եռանկեան մէջ, ունինք

$$\overline{Մ Գ^2} = \overline{Մ Գ^2} + \overline{Գ Գ^2} - 2 Գ Գ \times \Phi Գ$$

Արդ Մ Փ Գ եռանկեան մէջ ունինք.

$$\overline{Մ Գ^2} = \overline{\Phi Մ^2} + \overline{\Phi Գ^2}$$

եւ Ա Մ Բ ուղղանկիւն եռանկեան մէջ ունինք.

$$\overline{Մ \Phi^2} = \overline{Ա. \Phi \times \Phi Բ} = \left(\frac{\Phi Գ}{2} + Գ \Phi \right) \times$$

$$\times 2 \Phi Գ = \overline{\Phi Գ^2} + 2 \Phi Գ \times Գ \Phi:$$

$$\text{Արեւմտեան } Մ Գ^2 = 2 \overline{\Phi Գ^2} + \overline{Գ Գ^2} + 2 \Phi Գ \times Գ \Phi - 2 Գ Գ \times \Phi Գ.$$

եւ որովհետեւ Գ Գ = Գ Փ + Փ Գ, հ'ուեանանք.

$$\overline{Մ Գ^2} = \overline{Գ Գ^2},$$

$$\text{յ'որմէ } Մ Գ = Գ Գ$$

եւ հետեւաբար, ահա. Գ Գ Մ = ահա. Գ Մ Գ.

Աւելինք նաեւ.

$$Ա Մ + Մ Բ = Բ Գ' + Գ' Գ' + Ա Գ'$$

$$\text{Մ Բ} = Բ Գ' + Գ' Գ' + Ա Գ' - Ա Մ$$

$$\text{Արդ, } Գ' Գ' = Ա Մ + Բ Գ'$$

$$\text{Արեւմտեան, } Մ Բ = Բ Գ' + Ա Մ + Բ Գ' + Ա Գ' - Ա Մ$$

$$\text{Մ Բ} = 2 Բ Գ' + Ա Գ':$$

Սոյն երկու խնդիրներ եւս լուծողներ չ'ունեցան:

ՓՈՔՐ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍԻ

ԶՄԻՒՆԻՍՈՒՄ. — Կ. Ն. — 9 Յուլիս թըւակիր գրութիւննիդ ընդունեցանք. թիւ 31 եւ 32 խնդրոց լուծումներնիդ խմբագրութեանս հասած են ժամանակին: Եթէ ձեր անունը չը տեսաք լուծողներու ցուցակին մէջ, այն է թէ ձեր լուծումներն սխալ ըլլալու են: Այս բանս շատ աղէկ կրնայիք տեսնել յիշեալ կրկին խնդրոց լուծումներէն զորս հրատարակեցինք: Մեր գիտաւորութիւնը, Մաթի մէջ խնդիրներ առա-

ջարկելով, մաթէմատիկայի կամ բնագիտութեան դասեր տալ չ'է, այլ սոյն գիտութեանց մէջ աշխատիլ ուղղողներուն հրահանգներ հայթայթել որք մեծապէս կը նըպաստեն սովորած տեսութիւններն եւ սկզբունքները մշտապէս տպաւորելու նոցա յիշողութեան մէջ: Ձեր վերոյիշեալ երկու խնդրոց պատասխանները խնդրուածները չ'են, իսկ որպէս զի լուծումներ գոհացուցիչ լինին հարկ ահարժեք է որ պատասխանը ուղիղ ըլլան:

Գալով ձգաբաժի թանձրութեան, բոլորովին աննշան է ձեր այն գիտողութիւնը թէ ձեր դատած թանձրութիւնը 0,0005 պարզ աչօք տեսանելի է և մերը 0,000027 խոշորացոյցով միայն տեսանելի, ըստ որում այս բան չ'արդեւոր երբէք խնդրոյ մը ուղիղ կերպիւ լուծուած լինիլն որ տրուած թիւերէն միայն կ'ստանան ունին. եւ արդէն անշուշտ դիտած էք բաւական օգտաւոր կնիքը, 0,0005 (կէս հազարերորդամէթր) թանձրութիւն ունի՞ն. միթէ կարելի՞ բան է:

Խնդրոյ լուծումներն օրինաւոր պայմանաւ մէջն առաջ տրուած ըլլալու մասին դիտողութիւննիդ շատ իրաւացի է, այլ սակայն ի՞նչպէս ընել, մինչդեռ լուծողներ չը կան, ի զուր պիտի սպասենք երբեք երկայն ամիսներ: Զի խնդրոյ լուծման յապաղելն ալ քանի տեղերէ մեզ եկած խնդրանաց պատճառաւ է, որք քիչ մը ժամանակ յետաձգուիլը կը փափաքին:

ԱՏԱՆԱ. — Կ. Գ. Մ. — Յունիս 6 թուականի նամակնիդ ընդունեցանք եւ Ն. Պ. էֆէնտիէ ստացանք մէկ ոսկին: Ամեն լրագիր իւր գործին պատասխանատու է, մեր պայմանն է կանխիկ վճարում: Մաթի ամբողջ թիւերն ալ զրկուած են ձեզ, քանի որ Մաթի չ'է դադրած երբէք հրատարակուելէ: Աւելի ատեն թղթատուէն պահանջեցէ: Մաթի պալատներնիդ իմացուցէք, նոյնպէս Սիմօնէ և Մարիի ո՛ր մասն ըլլալը, որպէս զի չրկենք:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԻՐԱԳՐՈՅ